ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝+374 60517822, +374 28544291,Էլ.փոստ՝syunik@mta.gov.am

« » 2022թ., №

Ձեր՝ «28»դեկտեմբերի 2021թ.№ 483206

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ձեր հարցմանն ի պատասխան՝ տեղեկացնում ենք.

1. Այո՛, Սյունիքի մարզպետարանը վարում է տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն:
2. Վերոնշյալ վիճակագրությունը վարելու պարտականությունը կատարում է մարզպետարանի Քարտուղարության «Ընդհանուր բաժինը»:
3. Վերոնշյալի վիճակագրությունը ձեւավորվում է մարզպետարանում առձեռն, փոստային եղանակով, էլեկտրոնային փոստով ու էլ. հարցումների միասնական հարթակի միջոցով ստացված եւ մուտքագրված հարցումների քանակից: Քանի որ դրանց մակագրումը, ըստ բաժինների շրջանառությունն ու պատասխանների ուղարկումը համակարգված է ու ընդհանուր բաժնի համար տեսանելի է ողջ փաստաթղթաշրջանառությունը, ապա տվյալ ստորաբաժանումը առանձին հաշվառում է, թե մուտքագրված ու պատասխանված փաստաթղթերից որոնք են հարցումները:
4. Այո՛, տեղեկատվության հարցումների վիճակագրության տարեկան ամփոփման մասին տեղեկանքը հրապարակվում է մարզպետարանի կայքում՝ հետեւյալ հղմամբ.

http://syunik.mtad.am/texekatvutyunstanaluharcumner/ :

5. Այո:
6. Սյունիքի մարզպետարանում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը Սյունիքի մարզպետի խորհրդական Արմինե Ավագյանն է: Նշանակված է ՀՀ Սյունիքի մարզպետի 2018թ. սեպտեմբերի 11-ի N 89-Ա որոշմամբ, որը կցվում է:

7. Տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձը տարբեր տարիների մասնակցել է տեղեկատվության ազատության վերաբերյալ դասընթացների: Ցավոք, այժմ դրանց քանակն ու ժամկետները հիշողությամբ վերականգնել հնարավոր չէ, իսկ վերջինները եղել են հենց Ձեր կազմակերպության՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից վերջին տարում կազմակերպված առցանց դասընթացները:

Recoverable Signature

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN MELIKSET 4108600096

Հարգանքով՝ **Մ. Պողոսյան**

Կատարող Ա. Ավագյան
հեռ. +37493491167
syunik.press@mta.gov.am